Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆ
ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմի առաջնորդ

Տ. Մեսրոպ եպիսկոպոս Պարսամեանը (աւազանի անունը Արամ), ծնուել է Երեւանում, 1981 թ. մայիսի 15-ին։

1997–2002 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան դպրանոցում։

2001 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրուել է սարկաւագ՝ ձեռամբ Տ. Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեանի։

2003 թ.աւարտել է Գեւորգեան Հոգեւոր ճեմարանը՝ ստանալով աստուածաբանութեան բակալաւրի աստիճան։

2003 թ. օգոստոսի 31-ին, ձեռամբ Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաջիեանի, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ։

2004 թ. եղել է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գաւազանակիրը։

2004–2007 թթ. ուսանել է Ֆրանսիայի Ստրասբուրգի համալսարանում՝ ստանալով աստուածաբանութեան եւ կրօնական գիտութիւնների մագիստրոսի աստիճան։

2005 թ. սովորել է Դուբլինի (Իռլանդիա) Միջազգային ուսումնական կենտրոնում։

2007–2011 թթ. Գեւորգեան հոգեւոր ճեմարանում դասաւանդել է Քրիստոնէական բարոյագիտութիւն առարկան։ Միաժամանակ եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի փոխդիւանապետ։ Այս շրջանում երկու հովուական կացութիւն է ունեցել Բրիւսէլում (Բելգիա) եւ Նիցցայում (Ֆրանսիայ)։

2011 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Վինել Աստուած». Մարդու աստուածացման եռաստիճան ճանապարհն ըստ Սուրբ Ներսէս Շնորհալու վարդապետութեան» եւ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Անուշաւան եպիսկոպոս Ժամկոչեանի, ստացել մասնաւոր վարդապետական աստիճան։

Այնուհետեւ շարունակել է ծառայութիւնը Շուէյցարիայի Հայոց թեմում, որպէս առաջնորդական տեղապահ։

2012–2013 թթ. եղել է Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդական փոխանորդ, իսկ յաջորդ տարի ծառայութեան է անցել Փարիզում՝ որպէս Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ։

2007–2014 թթ. եղել է Եւրոպական եկեղեցիների խորհրդաժողովի «Եկեղեցի եւ հասարակութիւն» յանձնաժողովի անդամ։

2015–2017 թթ. ԱՄՆ-ում ստանձնել է Իլի-ի Բելվիլ քաղաքի Սուրբ Շողակաթ եկեղեցու հովուութիւնը։

2017 թ. պաշտօնավարել է Նիւ Եօրքի թեմական կենտրոնում՝ որպէս նախարարութիւնների տնօրէն։

2018 թ. նշանակուել է Սուրբ Վարդան Հայոց եկեղեցու առաջնորդական փոխանորդ։

2020 թ. աշնանը, Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ, նշանակուել է Գեւորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչ։

2021 թ. ծառայութեան է կոչուել ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմում որպէս նախարարութիւնների տնօրէն։

2022 թ. մայիսի 6-ին, Նիւ Եօրքում, 120-րդ թեմական ժողովի ժամանակ ընտրուել է ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմի առաջնորդ։

2022 թ. մայիսի 17-ին Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատումից յետոյ Մեսրոպ վարդապետ Պարսամեանը ստանձնել է 13-րդ թեմական առաջնորդի պաշտօնը։

2023 թ. ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ նշանակուել է Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ։

2023 թ. հոկտեմբերի 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ձեռնադրուել է եպիսկոպոս։

Հեղինակ է մի շարք Ուսումնասիրութիւնների եւ հրատարակութիւնների՝

«Առ եւ Ի նախդիրների իմաստային առումներն ըստ Եղիշէի «վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին» մատեանի», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003,

«Յանուն Մշակոյթի Աստուածաբանութեան. Հաւատքի լոյսը եւ Յայտնութեան կերպարը Հանս Ուրս վօն Բալթազարի «Փառքը եւ խաչը» շարքում», Ստրասբուրգ, 2007,

«Լինել Աստուած. Մարդու աստուածացման եռաստիճան ճանապարհն ըստ Սուրբ Ներսէս Շնորհալու վարդապետութեան», (Վարդապետական Աւարտաճառ, 2011). հրատ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, Բ. հրատ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2023

«Լոյս եւ յոյս. Հոգեւոր խորհրդածութիւններ», Երեւան, 2021